# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 74
*05 հունիսի 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի թիվ 85-86 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

*Կատ. '*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

30 05 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No – 85

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿՈՏԵՋԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 10/4 ԿՈՏԵՋԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԵԼԱՆՅԱ ՄԻՀՐԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԻՐ ԿՈՏԵՋԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ» ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 63 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. N 714 Ն որոշման «Է» կետով, 26.12.2002թ. ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի դրույթներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին»• ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

ՈՐՈՇԵՑԻ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 0012-0069 ծածկագրի 109.62քմ (70.98քմ-ը որպես սեփականություն, իսկ 38.64քմ-ը որպես ընդհանուր սեփականություն) հողատարածքը (համաձայն հատակագծի) անհատույց, սեփականության իրավունքով հատկացնել Մելանյա Միհրանի Շահինյանին:
2. Նշված հողատարածքում կառուցված շինությունները օրենքի ուժով ճանաչել օրինական:
3. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
   գ. Գուգարք Կոտեջային 2-րդ փողոց 10/4 կոտեջ
4. Ուժը կորցրած ճանաչել գյուղապետի 24.12.2013թ. թիվ 228 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

30 05 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ № - 86

06-031-0036-0015 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 Ն որոշումով, հիմք ընդունելով 05.12.2016թ. N 5679 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝*

## ՈՐՈՇԵՑԻ.

1. Վերականգնել Գուգարք համայնքի 06-031-0036-0015 ծածկագրի տակ գտնվող 0.21845հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը, որը փաստացի ամբողջությամբ հատկացված է և դրա նկատմամբ ճանաչել Հովհաննես Վաղինակի Սարգսյանի սեփականության իրավունքը:
2. 0.21845հա հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:
3. Ճանաչել 06-031-0036-0015 ծածկագրի տակ գտնվող 0.21845հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված 123.68քմ մակերեսով նկուղի, 116.08քմ մակերեսով բնակելի տան, 83.38քմ մակերեսով բաց պատշգամբի, 7.88քմ մակերեսով մառանի, 10.84քմ մակերեսով սանհանգույցի, 86.29քմ մակերեսով նկուղի, 106.26քմ մակերեսով բնակելի տան, 37.49քմ մակերեսով ավտոտնակի, 12.33քմ մակերեսով ծածկի, 89.65քմ մակերեսով բնակելի տան, 93.99քմ մակերեսով բնակելի տան, 61.49քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ Հովհաննես Վաղինակի Սարգսյանի (ծնվ. 14.07.1991թ.) սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք 4-րդ փողոց տուն 5

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ